ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 100-Ա

29 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻԿԱՀՈՂ ԵՎ ԱՌԱՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ/ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. Ղուկասյանի 08.06.2022թ. թիվ 01/12/03958-2022, Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ-ի 27.12.2021թ. թիվ 21 գրությունները և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Շիկահող գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ամբուլատորիայի շենքի /ներկայումս օգտագործվում է «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից/ սպասարկման համար նախատեսված 0.02624 հա /09-072-0002-0011-հց/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց սեփականության իրավունքով /նվիրատվություն/ օտարել Հայաստանի Հանրապետությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Առաձաջոր գյուղի 1-ին փողոցի թիվ 36 հասցեում գտնվող «Նորաշենիկի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի պոլիկլինիկայի շենքի սպասարկման համար նախատեսված 0.1 հա /09-016-0003-0005-հց/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց սեփականության իրավունքով /նվիրատվություն/ օտարել Հայաստանի Հանրապետությանը:
3. Կապան համայնքի ղեկավար Գ. Փարսյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**Կողմ( 23 )՛**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ ____________

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ____________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԵԿ ԴԱՎԹՅԱՆ

ԷԴԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԹԱՅԱՆ

Դեմ ( 0 )

Ձեռնպահ ( 0 )

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2022թ. հունիսի 29*

*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 130-Ա**
**20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 100-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Շիկահող և Առաջաձոր գյուղերում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց սեփականության իրավունքով /նվիրատվություն/ Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին» թիվ 100-Ա որոշման 1-ին կետում «(09-072-0002-0011)» թվերը փոխարինել «(09-072-0002-0018)» թվերով:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( 20 )՝**

**ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ** ____________

**ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ** ____________

**ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** ____________

**ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ** ____________

**ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ____________

**ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** ____________

**ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ____________

**ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ____________

**ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ** ____________

**ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ____________

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2022թ. սեպտեմբերի 20*

*ք. Կապան*